Հավելված
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի
«____» _____ 2019 թ.
N _____-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գեոդեզիայի և քարտեզագրության վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրական խնդիրներից բխող, մասնավորապես ՀՀ կառավարության կողմից Կոմիտեի 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով հաստատված Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (ստանդարտի) մշակմանը միտված ռազմավարության ու ծրագրերի մշակման անհրաժեշտությամբ և վարչության գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ:

Վարչության աշխատանքային ռեսուրսներն ամբողջությամբ ներգրավված են հետևյալ աշխատանքներում.

- ՀՀ տարածքի երկրատեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացման՝ մասնավորապես Վաղարշապատ քաղաքի պիլոտային քարտեզագրական հենքի·ստեղծման աշխատանքների վերահսկում,
- ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտակրթական հաստատությունների, բնակչության կարիքների համար երկրատեղեկատվական տվյալների ու քարտեզագրական նյութերի ապահովում,
- Պետական գեոդեզիական ցանցի ներդրման, պահպանման և արդիականացման աշխատանքներ,
- Աշխարհագրական անվանումների ազգային տեղեկատվական բանկի և Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական գրանցման իրականացում, աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի ստեղծում ու վարում և դրանց տվյալների հիման վրա պաշտոնական առցանց և տպագիր տեղեկատուների, ընդհանուր և թեմատիկ բառարանների, ցանկերի ստեղծման ու հրատարակման աշխատանքների կազմակերպում և ղեկավարում,
- Հիմնարար քարտեզագրական արտադրանքի (այդ թվում՝ ազգային ատլասի, թեմատիկ ատլասների, ուսումնական, հանրային և այլ պաշտոնական քարտեզների) ստեղծում և հրատարակում,
- Վարչության իրավասության սահմաններում համայնքների և մարզերի սահմանների նկարագրման և քարտեզագրման աշխատանքներին մասնակցություն,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով, ինչպես նաև 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների նախատեսվող ծրագրով Կոմիտեի կողմից իրականացվելու են մի շարք անհետաձգելի միջոցառումներ, որոնց շրջանակներում կստեղծվի նորագույն պահանջներին ամբողջությամբ բավարարող ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք, կմշակվեն և կներդրվեն տվյալների ստանդարտների, ինչպես նաև մետատվյալների բանկերի վերաբերյալ նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթեր:

Միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է.

- Վարչությանը ներգրավել Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրի մշակման գործընթացներում,
- Կազմակերպել և իրականացնել ազգային տարածական տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծմանն ուղղված իրավաօրենսդրական և գիտական, հետազոտություններ,
- Իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքի երկրատեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացում:

Նախատեսվող փոփոխությունների նպատակն է ստեղծել ազգային տարածական տեղեկատվական ենթակառուցվածք՝ իր իրավական և տեխնիկական ժամանակակից լուծումներով:

Այս նպատակի իրականացման հիմնական խոչընդոտներից է Կոմիտեի համակարգում ներգրավված քաղաքացիական ծառայողների նեղ կադաստրային ոլորտային գիտելիքները՝ մասնավորապես գեոդեզիայի և քարտեզագրության ուղղությամբ: Այդ պատճառով առաջարկվում է Վարչության աշխատանքներում ներգրավել մասնավոր հատվածում համապատասխան փորձ ունեցող Երկրատեղեկատվական համակարգերի մասնագետների, որոնք կկարողանան երկարաժամկետ ծրագրերի համատեքստում կարճաժամկետ կտրվածքով ապահովել որակական շոշափելի փոփոխություններ:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող նորարարությունները իրականացնելու նպատակով պետք է մշակվեն ազգային տարածական տեղեկատվական ենթակառուցվածքի բաղադրիչ կազմող թեմատիկ տարածական տվյալների ցանկը, դրանց հատկորոշիչները, ստանդարտների և մետատվյալների կատալոգները:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքելու պահից սկսած մեկ տարի ժամկետով:

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նշվածն իրագործելու համար անհրաժեշտություն է առաջանում կատարելու փորձագիտական աշխատանքներ, որոնց հիմնական նպատակներն են.

- Միջազգային փորձի ուսումնասիրություն,

- Տեխնիկական առաջադրանքների և այլ փաստաթղթերի կազմում,
- Ծրագրային և սարքային ապահովման միջոցների գնահատում,
- Ստանդարտների և մետատվյալների մշակում,
- Իրականացված աշխատանքների որակի գնահատում:

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են.

- թեմատիկ տարածական տվյալների ցանկի կազմում,
- թեմատիկ տարածական տվյալների հատկորոշիչների և ստանդարտների մշակում և ներդրում,
- մետատվյալների կատալոգի մշակում և ներդրում,
- հաշվետվությունների մշակում:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- աշխարհագրություն, երկրաբանություն և հարակից գիտությունների հետ կապված բարձրագույն կրթություն,
- իր լիազորություններին վերաբերող անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,
- անհրաժեշտ ծրագրային փաթեթների կիրառման հմտություններ,
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,
- թիմային աշխատանքի ունակություն,
- հաշվետվությունների, փաստաթղթերի կազմման և ներկայացման ունակություն,
- բանակցություններ վարելու կարողություն,
- փոփոխությունների կառավարում,
- ժամանակի կառավարում:

7. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Փորձագետը Կոմիտեին տրամադրվող փորձագիտական ծառայությունների շրջանակում պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

Ռազմավարության մշակում

- Ազգային տարածական տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծմանն ուղղված գիտական, իրավա-օրենսդրական, հասարակական հետազոտությունների կազմակերպում և իրականացում,
- տեխնիկական առաջադրանքների մշակում,
- առկա գետոդեկատվական բազաների պարունակության և կարողությունների գնահատում,
- թվային տարածական տվյալների ստանդարտիզացիա, մետատվյալների կատալոգների ստեղծում կամ թարմացում,
- կիրառական հետազոտություններ աշխարհագրական, կադաստրային և գեոդեզիական տեղեկատվական համակարգերի ստեղծման և սպասարկման ոլորտում, վերջիններիս ներդաշնակեցում Ինտեգրված կադաստրի հայեցակարգի հետ,
- տարածական տվյալների հավաքագրման և թարմացման ժամանակակից մեթոդների ներդրում,
- թվային գեոտվյալների անվտանգությունը, գաղտնիությունը և պահպանումը ապահովող մեխանիզմների մշակում, հեղինակային իրավունքների հստակեցում

Նախագծերի մշակում և իրականացում

- Ներքին քրաուդսորսինգ, նորարարական գաղափարների հավաքագրում, ,
- արտաքին քրաուդսորսինգ, օրինակ՝ մատրահրավերների, հաքաթոնների միջոցով,
- նոր գործընկերների հետ (ներքին/արտաքին շահակիրներ) համագործակցային կապերի ստեղծում, օրինակ՝ պետական/մասնավոր համագործակցություն, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ, համալսարաններ և այլն,
- կրթական և արդյունաբերական ոլորտների ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակում համատեղ նախագծերի կազմակերպում,
- նորարարությունների ալիքի տարածում ներսում՝ նպաստելով պետական սեկտորի գործարարական նախաձեռնությունների ցանցի զարգացմանը,
- նորարարական մշակույթի ձևավորում՝ ողջ համակարգին հնարավորություն տալով ստեղծել աշխատանքային համագործակցություն (օրինակ՝ տարբեր գաղափարների և մտածողությունների սինթեզ),
- պետական համակարգում նորարարական ուսումնասիրությունների և պրակտիկայի միջոցով պարբերական թարմացումներ (բացահայտել նորաստեղծ պրակտիկան, պարզել հաջորդ քայլերը, հասկանալ, թե ի՞նչ է կատարվում կառավարությունում, ընդգրկված կողմերին միավորել նոր մտածելակերպի և աշխատելաոճի շուրջ և գնահատել Կոմիտեի համար այդ մոտեցումների դերն ու նշանակությունը),
- շնորհանդեսների, հոդվածների և վերապատրաստումների միջոցով ստեղծված գիտելիքների փոխանակում և նորարարությունների համար նպաստավոր միջավայրի ստեղծման աջակցում,
- պետական սեկտորում ներուժի և արտադրողականության զարգացման խրախուսում՝ թվային ենթակառուցվածքներից օգտվելով: